



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 19983 « 09 11 2018 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՎԼԻՃՆԵՐԻ ԵԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի դահլիճների շահագործման կարգը սահմանելու նպատակով, ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ՝

1. Սահմանել, որ Երևանի պետական համալսարանի ներքոհիշյալ դահլիճները շահագործելու և դահլիճներում միջոցառումներ (նիստեր, քննարկումներ, հանդիպումներ և այլն) կազմակերպելու թույլտվությունը տալիս է ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորը.

- ա) Կենտրոնական մասնաշենքի Մեծ դահլիճ,
- բ) Կենտրոնական մասնաշենքի Մեծ դահլիճի փայտե սրահ,
- գ) Կենտրոնական մասնաշենքի Գիտական խորհրդի նիստերի դահլիճ,
- դ) Թիվ 2 մասնաշենքի Պալեանների անվան դահլիճ,
- ե) Թիվ 4 մասնաշենքի Կոնֆերեց-դահլիճ,
- զ) Թիվ 6 մասնաշենքի դահլիճ,
- է) Թիվ 7 մասնաշենքի Չարենցի անվան դահլիճ,
- ը) Թիվ 7 մասնաշենքի Երկանյանների անվան դահլիճ,
- թ) Թիվ 7 մասնաշենքի Ֆիրդուսու անվան դահլիճ,
- ժ) Թիվ 8 մասնաշենքի դահլիճ:

2. Սույն հրամանի 1-ին կետում նշված դահլիճներում միջոցառումներ կազմակերպելու թույլտվություն ստանալու նպատակով միջոցառման կազմակերպիչը (պատասխանատուն) պարտավոր է միջոցառման անցկացման օրվանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ դիմում ներկայացնել ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին՝ նշելով միջոցառման անցկացման վայրը, ամսաթիվը, տևողությունը, համառոտ բովանդակությունը, մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ